

ԵՐԱԿՐԹՈՆԵԱՅ

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

Մայր Աթոռում կատարվեց Հին Վեհարանի վերաբացման արարողությունը



Կյանք մշտապես կարելու է Հայ Եկեղեցու եւ ՀԲԸՄ-ի համագործակցությունը՝ հավատով, որ այն գործակցելու է ազգային կյանքը, նպաստելու է Հայ Եկեղեցու ազգապահպան առաքելության առավել արդյունավետ իրականացմանը՝ հատկապես Սփյուռքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը

Հունիսի 5-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, Նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Հին Վեհարանի վերաբացման հանդիսավոր արարողությունը: Պատմական կառույցը հիմնանորոգվել ու բարեկարգվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության Նախագահ տիար Պերճ Սեդրակյանի եւ տիկին Վերա Սեդրակյանի ազնիվ բարերարությամբ:

Արարողությանը ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, Մայր Աթոռի միաբաններ, Հին Վեհարանի բարերարները եւ ՀԲԸՄ անդամներ, ինչպես նաեւ՝ կրթության ու մշակույթի գործիչներ:

Հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի եւ մասնակցությամբ հոգեւորականաց դասի՝ կատարվեց օրհնության կարգ:

Հավարտ արարողության՝ ներկաներին իր օրհնությունը բաշխեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը. «Փառք եւ գոհություն ենք բարձրացնում առ Աստված, որ մեր կյանքից ներս առատորեն շնորհներ է հեղում, որոնցով բարեգարդվում է եւ պայծառանում մեր Ս. Եկեղեցին իր առաքելության մեջ: Մենք գոհություն ենք հայտնում Աստծուն, որ այսօր ձեզ հետ միասին բացում ենք դռները Հին Վեհարանի»:

Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը բերեց Հին Վեհարանի նորոգությունը հանձն առած Հայ Եկեղեցու եւ ազգի նվիրյալ զավակներ տեղ եւ տիկին՝ Պերճ եւ Վերա Սեդրակյաններին՝ մաղթելով, որ երկնավոր Տիրոջ Աջը միշտ տարածյալ մնա Սեդրակյան ընտանիքի վրա: «Նրանք նույնպես ցանկացան բարի հիշատակ ունենալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, որովհետեւ ապրել են Ս. Էջմիածնով, եւ նրանց առաքելության մեջ միշտ կարելու տեղ է ունեցել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը», - ասաց Հայոց Հայրապետը՝ գնահատանքով վկայելով նաեւ, որ ՀԲԸՄ Նախագահ տիար Պերճ Սեդրա-

հայտնեց նաեւ Մայր Աթոռի բարեկարգման գործին տարիներ շարունակ իրենց կարելու նպաստը բերող տիար Գազիկ Գալստյանին եւ «Հորիզոն 95» շինարարական ընկերության աշխատակիցներին՝ մաղթելով գեղեցիկ իրագործումներով շարունակել հայրենի երկիրը շենացնելու իրենց բարի ծառայությունը:

Վերջում Հայոց Հայրապետն աղոթքով հայցեց Բարձրալից, որ խաղաղությունն ուղեկից դարձնի Հայոց աշխարհին եւ աշխարհասփյուռ հայրերին, որպեսզի գոհաբանությամբ եւ նվիրյալ աշխատանքով կարողանան պայծառացնել հայ կյանքը Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում:

Այնուհետեւ Հայոց Հովվապետը եւ Սեդրակյան ամուսինները, հատելով Հին Վեհարանի մուտքի կարմիր ժապավենը, կատարեցին բացումը հիմնանորոգված Հին Վեհարանի, շրջեցին



սրահներում, դիտեցին ցուցադրվող եկեղեցական-ծիսական բարձրարվեստ արժեքավոր ցուցանմուշները:

Ղազար Ա Ջահկեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանում 1738-1751 թթ., Հայոց Կաթողիկոսարանը Ս. Էջմիածնի Մայր տաճարի արեւմտյան կողմից փոխադրվում եւ հաստատվում է դեռեւս Մովսէս Գ Տաթևացի Հայրապետի օրոք (1629-1632 թթ.) կառուցված երկհարկանի շենքի վերին հարկում:

Շարունակությունը՝ էջ 2

«Ժամանակ» օրաթերթի 100-ամյա հոբելյանին նվիրված հանդիսություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Հունիսի 28-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթի 100-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր երեկոյթը: Ներկա էին ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկա-

րամյա շրջանը համահունչ լինի Նախորդին:

Իր սրտի խոսքն ասաց նաեւ «Ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արա Գոչունյանը: Նա, գոհունակությամբ անդրադառնալով «Ժամանակի» 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների անցկացմանը Կ. Պոլսում եւ Հայաստանում, շնորհակալություն հայտնեց



վար Վիգեն Սարգսյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Մայր Աթոռի միաբաններ, կրթության եւ մշակույթի գործիչներ, Գեւորգյան ճեմարանի դասախոսներ եւ սաներ:

Ողբույթի եւ բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի արխիվի եւ թանգարանների տնօրեն Ասողիկ քին. Կարապետյանը, ով արժեւորեց «Ժամանակ» օրաթերթի անցած ուղին՝ ընդգծելով պարբերականի թողած դրական ազդեցությունը պոլսահայ ազգային, հոգեւոր եւ մշակութային կյանքի վրա:

Բանախոսությամբ հանդես եկան ՀԲԸՄ հայաստանյան ներկայացուցչության տնօրենի պաշտոնակատար Հովիկ Եօրեղյանն ու Մայր Աթոռի պաշտոնական մամուլի եւ հրատարակչական բաժինների տնօրեն Շահե վրդ. Անանյանը՝ մասնավոր անդրադարձ ունենալով «Ժամանակ» օրաթերթի հիմնադրմանն ու հարյուրամյա գործունեությանը՝ միաժամանակ ընդգծելով օրաթերթի ունեցած կարեւորագույն տեղն ու դերը հայ մամուլում:

Այնուհետեւ «Ժամանակի» լավագույն հրապարակումներից ու հեղինակներից՝ Չապել Եսայանից, Վահան Թեքեյանից, Չախրատից կատարված ծաղկաքաղն ընթերցեց ՀՀ վաստակավոր արտիստ Դավիթ Հակոբյանը: Ապա հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններով ելույթ ունեցավ Մայր տաճարի երգչախումբը:

Իսկ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանն անդրադարձավ «Ժամանակ» օրաթերթի անցած պատվախնդիր ուղուն եւ պոլսահայ կյանքում ունեցած կարեւոր առաքելությանը՝ գնահատանքով հիշելով օրաթերթի ստեղծմանը, կայացմանը եւ արգասավորմանը նպաստած բոլոր երախտավորներին: Շնորհավորելով խմբագրակազմին՝ Նախարարը մաղթեց, որ օրաթերթի կյանքի երկրորդ հարյու-

հոբելյանի տոնախմբմանը նպաստած բոլոր անձանց եւ կառույցներին՝ մեծ պատիվ համարելով նաեւ այն, որ այդ հանդիսությունների եզրափակումը կատարվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո՝ օրհնությամբ եւ ներկայությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Իր խոսքում տիար Գոչունյանը, ներկայացնելով օրաթերթի ստանձնած առաքելությունը, նշեց, որ հայ կյանքի քաղաքական, համայնքային, մշակութային անցուղարձերի հետ մեկտեղ օրաթերթի էջերում լայնորեն լուսաբանվել է Հայ Առաքելական Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի գործունեությունը՝ մշտապես ի մտի ունենալով Հայ Եկեղեցու հայապահպան եւ հոգեւոր դերակատարությունը: Վերջին տարիներին օրաթերթի նկատմամբ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի համար շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ «Ժամանակ» օրաթերթի խմբագիրը Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ընծայեց 100-ամյա հոբելյանի առիթով պատրաստված օրաթերթի հիմնադիր Միսաք Գոչունյանի կիսանդրին: Երեկոյթի ավարտին ներկաներին իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Ամենքս այսօր համախմբված ենք տոնախմբելու հայրենի մշակույթի պատմության մեջ մի կարելու իրադարձություն: Հարյուրամյա հոբելյանն է հայ իրականության ամենահին՝ «Ժամանակ» օրաթերթի, որ կյանքի կոչվեց մայրենի լեզվով իր հրապարակումներով նեցուկ եւ ազդակ լինելու թուրքի մայրաքաղաքում եւ նրա տարածքում ապրող հայության ազգային կյանքին: Օրաթերթի էջերում արժանավեր են 20-րդ դարասկզբի մեր պատմության թե՛ ողբերգական, թե՛ ուրախալից իրադարձություններ, մշակութային եւ ազգային-եկեղեցական ամենատարբեր հարցեր ու խնդիրներ:

Շարունակությունը՝ էջ 2

Հին Վեհարանի վերաբացման ...

Սկիզբը՝ էջ 1

Մինչև 1962 թվականը Հայոց Հայրապետները բնակվել են իրենց գործունեությունն իրականացրել են Հին Վեհարանի շենքում: 1968-ին, պայմանավորված նոր Վեհարանի հիմնադրմամբ, Վազգեն Ա Հայրապետի նախաձեռնությամբ եւ ազգային բարերար Ալեք Մանուկյանի աջակցությամբ Հին Վեհարանը նորոգվում է եւ սկսում գործել որպես թանգարան: 2010-14-ի հիմնանորոգությունից հետո, Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ, Հին Վեհարանում հաստատվում են Հայոց Հայրապետներին եւ արքաներին նվիրված ցուցասրահներ, որտեղ գետեղված են նրանց գեղանկարները,

նվիրական առարկաները եւ անձնական իրերը: Հովնաթանյանների ձեռքով նկարագրված գահասարահում՝ «Ծաղկյա դահլիճում», ցուցադրվում է 400 տարվա հնություն ունեցող սրբալույս մյուռոնը: Այստեղ է նաեւ 1837-ին Մադրասում պատրաստված Հայոց Հայրապետների պատմական գահը եւ հայրապետական արծիվը, որ պատկանել է Փիլիպոս Ա Աղբակեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսին (1632-1655 թթ.): Սրահներից մեկում ցուցադրության են դրված նաեւ Կոմիտաս վարդապետին պատկանած իրեր, ներկայացված են հայկական արծաթագործության եւ ասեղնագործության եզակի ստեղծագործություններ, ծիսական պարագաներ:



Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի հանդիպումը ժնեւում

Հուլիսի 2-ին ժնեւում սկսվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) կենտրոնական կոմիտեի 64-րդ հանդիպումը:

ԵՀԽ Կենտրոնական կոմիտեում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էին ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի թեմական պատվիրակ ու թեմի միջեկեղեցական հարաբերությունների տնօրեն Վիգեն արք. Այբազյանը եւ Մայր Աթոռի համացանցային ծառայությունների գրասենյակի տնօրեն տիկին Փուլա Տեր-Մաթոյանը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից հանդիպմանը մասնակցում էին Նարեկ եպս Ալեմեյանը եւ տիկին Թեմի Փերիկ Սիմոնյանը:

Բացումը տեղի ունեցավ աղոթքով, որի ժամանակ ներկաներն աղոթեցին Աղան արք. Պալիոգյանի եւ բոլոր այն անձանց հոգիների հանգստության համար, ովքեր ներգրավված են եղել Էկումենիկ շարժման մեջ:

Յոթնօրյա հանդիպման օրակարգի առաջին խնդիրներից էր մոտակա ութ տարիների համար կոմիտեի մշտական հանձնաժողովների ղեկավարների ընտրությունն ու անդամների նշանակումը: Նկատի ունենալով Վիգեն արքեպիսկոպոսի երկարամյա փորձառությունը, ակտիվ մասնակցությունը Էկումենիկ շարժ-

մանը՝ համընդհանուր համաձայնությամբ նրան ընտրեցին ԵՀԽ կարելորագույն հանձնախմբերից մեկի՝ ֆինանսական քաղաքականության հանձնախմբի նախագահ: Վիգեն սրբազանն ի պաշտոնե կծառայի նաեւ որպես ԵՀԽ Գործադիր կոմիտեի անդամ: Տիկին Փուլա Տեր-Մաթոյանն ընտրվեց կառավարման եւ թեկնածուների առաջադրման հանձնախմբի անդամ:

Կենտրոնական կոմիտեի հանդիպման օրակարգի թեմաները հիմնականում առնչվում էին արդարության եւ խաղաղության ուխտագնացության նյութին, որի շրջանակներում քննարկումներ են տեղի ունենալու Եկեղեցիների միության, բնակչիմայական փոփոխությունների, տնտեսական արդարության եւ ռեսուրսների բաշխման վերաբերյալ: 2013 թ. նոյեմբերին ԵՀԽ-ի կողմից որոշեցրած միության հայտարարությունը կոչ էր արել բոլոր եկեղեցիներին «ավելի աշխուժացնել հանուն արդարության, խաղաղության եւ արդարության բժշկման աշխատանքը եւ միասին դիմագրավել արդի սոցիալական, տնտեսական եւ բարոյական խնդիրների բարդ մարտահրավերները»:

ԵՀԽ Կենտրոնական կոմիտեի 64-րդ հանդիպումն ավարտվեց հուլիսի 9-ին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀԵԽ ներկայացուցչական ժողովի մասնակիցներին



Հուլիսի 2-ին Մայր Աթոռ Սր Էջմիածնի մատենադարանում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Հայ Եկեղեցու երիտասարդաց միավորման (ՀԵԽ) ներկայացուցչական ժողովի առիթով Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերից Մայր Աթոռ ժամանած երիտասարդական միությունների շուրջ վաթսուս ներկայացուցչի հետ: Ներկա էին ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ, ՀԵԽ հոգեւոր պատասխանատու Հովնան արք. Տերտերյանը, Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանը:

Հանդիպումն սկսվեց ՀԵԽ հոգեւոր պատասխանատու Հովնան սրբազանի խոսքով, ով ներկայացրեց առաջիկա օրերին կայանալից Հայ Եկեղեցու թեմական երիտասարդաց խորհուրդների ներկայացուցիչների ժողովի օրակարգը: Եռօրյա ժողովի քննարկման հարցերն էին՝ 2015 թ. Մայր Աթոռում գումարվելից ՀԵԽ 3-րդ պատգամավորական ժողովի նախապատրաստումը, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները եւ միջթեմական երիտասարդական համագործակցության սերտացումը: Սրբազանը վստահություն հայտնեց,

որ ժողովը կնպաստի տարբեր թեմերի երիտասարդական կառույցների միջեւ կապերի առավել արդյունավորմանը եւ կզորացնի սերն ու հավատարմության ոգին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Ամենայն Հայոց Հայրապետի հանդեպ:

Այնուհետեւ թեմերի երիտասարդ ներկայացուցիչներին իր հայրական օրհնությունն ու պատգամը փոխանցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ ընդգծեց, որ երիտասարդների ներկայությունը Եկեղեցական կյանքում առանձնակի ոգեւորություն ու խանդավառություն է պարգեւում՝ լավատեսությունը ներշնչելով, որ Հայոց Եկեղեցին ապահով ձեռքբերում է: Նորին Սրբությունը գոհունակությամբ փաստեց, որ աշխարհի տարբեր ծայրերից երիտասարդ հայորդիները նախանձախնդիր ոգով ու նվիրումով, հավատարիմ իրենց հայրերի հավատքին ու սիրուն, գալիս են շարունակելու Հայ Եկեղեցու սրբազան առաքելությունը: Հայոց Հովհաննիսյանը նաեւ իր գնահատանքը հայտնեց թեմակալ առաջնորդներին՝ երիտասարդությանը դեպի Մայր Եկեղեցի առաջնորդելու եւ կապը Եկեղեցու հետ ամուր պահելու համար:

Անդրադարձ կատարելով Հայ Եկեղեցու եւ հավատացյալի առջեւ ծառացած խնդիրներին ու մարտահրավերներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր մտահոգությունը հայտնեց


որոշ կրոնական կազմակերպությունների եւ շարժումների քայքայիչ գործունեության, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու հեղինակությունը վարկաբեկող հակաեկեղեցական ուղղորդված քարոզչության առիթով: Այս առումով Վեհափառ Հայրապետը կարելի էր երիտասարդական խորհուրդների եւ միությունների գործունեությունը՝ միտված ազգային-եկեղեցական կյանքում նման անցանկալի երեւոյթների կանխարգելմանը եւ հոգեւոր-ազգային արժեքների գորացմանն ու քարոզչությանը:

Խոսելով Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով ՀԵԽ ծրագրերի մասին՝ Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին իրենց երկրներում եւ համայնքներում ամենքին հաղորդ դարձնել Հայոց ցեղասպանության իրողությանը՝ իրենց ներդրումը բերելով հայ ժողովրդի 20-րդ դարի մեծագույն ողբերգության համընդհանուր ճանաչման գործընթացին:

Վերջում Գարեգին Բ Կաթողիկոսը թելադրեց երիտասարդներին ավելի մեծ հանձնառությամբ գործել ի նպաստ ազգային-եկեղեցական շահերի պաշտպանության:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց երիտասարդների հարցերին, որոնք վերաբերում էին ՀԵԽ առաքելության գործառնական ուղղված ծրագրերին եւ հետագա անելիքներին:

«Ժամանակ» օրաթերթի 100-ամյա ...



Սկիզբը՝ էջ 1

Մեր ժողովրդին 20-րդ դարասկզբին օրհասած Մեծ եղեռնի տարիներին անգամ «Ժամանակ» էջերին ժամանակը կանգ չի առել, այլ իրականության ու քննադատության գրչով շարունակել է դատապարտել Օսմանյան կայսրության մեջ պարբերաբար շարունակվող հայ ազգի թալանն ու կոտորածը, ծրագրված մշակութային եւ ազգային փորձառնությունների դեմ ուղղված հալածանքը: Իբրեւ ոգու եւ մտքի զինակիցներ ունենալով երվանդ Օտյանին, Գրիգոր Չոփրապին, Վահան Թեքեյանին, Թեոդիկին, Հովհաննես Թումանյանին, Արշակ Չոպանյանին եւ ազգային մշակութային-հասարակական այլ մեծերի՝ օրաթերթի հիմնադիրները նույնիսկ հայ ժողովրդի համար ամենածանր պահերին, իրենց իսկ քնորոշմամբ, «ոչ միայն լացեցին, այլ նաեւ լացեցին ու քայլեցին»:

«Ժամանակ» օրաթերթն այսօր էլ շարունակում է իր Էջերի վրա լուսաբանել հայրենի երկրում եւ Սփյուռքում հայ ազգային կյանքից ներս տեղի ունեցող կարեւոր իրադարձությունները՝ չզավաճանելով հիմնադիր հայորդիների տեսլականին՝ կերտել ու պահպանել ազգային մշակույթը նույնիսկ ամենաօրհասական պահերին: «Ժամանակ» օրաթերթը, կարելի է ասել, ժառանգորդն է հայ մամուլի

բազմադարյա ավանդության, որի շնորհիվ աշխարհասփյուռ հայորդիները մասնակից էին դառնում մայրենի լեզվին ու մշակույթին, ժամանակի ընթացքին ու ոգուն համաձայն նոր շունչ ու ավյուն տալիս դարերի խորքից եկող հայ մշակութային ավանդներին:

Հորեյանական այս պահին չենք կարող չարձանագրել, որ օրաթերթն ու նրա խմբագ-

րակազմը շարունակում են անշեղորեն քայլել արդեն մեկ դարից ավելի ձգվող ազգային-եկեղեցական ուղիով: Արդի պատմաքաղաքական նոր պայմաններում ու հանգամանքներում «Ժամանակը» շարունակում է հայ լրագրության ոգով իրազեկել եւ տեղեկացնել Սփյուռքում ապրող մեր հայորդիներին ազգային-եկեղեցական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների, հիմնախնդիրների ու հիմնահարցերի մասին:

Այսօր պատեհ առիթն ունենց մեկդարյա պատմության ոսպնյակի միջով վերաբծելու «Ժամանակ» օրաթերթի ստեղծած եւ շարունակական դարձած սփյուռքահայ լրագրության բարի ավանդը: Առիթն ունենց նաեւ այսօր՝ հոբելյանական այս երեկոյի ընթացքին, հայրապետական մեր օրհնությունն ու բարեմադրանքները փոխանցելու օրաթերթի ողջ խմբագրակազմին, ի դեմս գլխավոր խմբագիր տիար Արա Գոչունյանի, համայն հայության

հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սր Էջմիածնից առ Աստված Մեր աղոթքը բարձրացնելու օրաթերթի ստեղծմանն ու կայացմանը նպաստած բոլոր ազնիվ այն հայորդիների հոգիներին՝ համար, ովքեր տարիների ընթացքում կերտեցին եւ ներկա սերունդներին փոխանցեցին հայ լրագրողի ու հրապարակախոսի ազնիվ եւ անաչառ անունը:

Հայրապետական Մեր սերն ու շնորհավորանքները նաեւ բոլոր այն մտավորականներին ու հայորդիներին, ովքեր իրենց մտքի եւ ոգու արգասիքով այսօր էլ շարունակում են Սփյուռքի պարբերականներում եւ ի մասնավորի «Ժամանակ» օրաթերթի էջերում գալիք սերունդներին փոխանցել ազգային-եկեղեցական եւ հասարակական կյանքից քաղված պատմական դասերն ու խրատները»,- ասաց Նորին Սրբությունը:

Հանդիսությունը փակվեց Պահպանիչ աղոթքով եւ Հայրապետական մաղթերով:

Հունիսի 29-ին՝ Մայր տաճարում մատուցված Պատարագի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ «Ժամանակ» օրաթերթի հիմնադիրների եւ 100-ամյա գործունեության ընթացքում օրաթերթի կայացման իրենց նպաստը բերած նվիրյալների հոգիների հանգստության համար:

Գեորգյան հոգեւոր ճեմարանի 2013-2014 թթ. ուսումնական տարվա փակման հանդիսությունը Մայր Աթոռում



Հունիսի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ ճեմարանի՝ 2013-2014 թթ. ուսումնական տարվա փակման հանդիսավոր արարողությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերար Հայկ Դիդիգյանը, Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների տեսչական ու ուսուցչական անձնակազմը եւ ճեմարանի սաները:

ղեւ եկան ճեմարանի սաներն ու երգչախումբը՝ ղեկավարությամբ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Ասատրյանի:

Ճեմարանի ուսումնական տարվա փակման ցերեկույթն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ պատգամով: Նորին Արքեպիսկոպոսը հայտնեց անցնող տարվա ընթացքում Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններում արձանագրված հաջողությունների եւ դրական տեղաշարժերի առիթով՝ իր գնահատանքը բերելով ճեմարանի տեսչությանը եւ դասախոսական կազմին: Հայոց Հոլմապետը վերահաստատեց, որ հոգեւոր ճեմարանի գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի արժանավոր հոգեւորականներ դաստիարակելուն, գիտելիքների հետ մեկտեղ սաների մեջ կամք եւ տեսիլք կրթելուն, որպեսզի, մուտք գործելով եկեղեցական ասպարեզ, պատրաստ լինեն շարունակելու առաքելաշավիկ հայրերի նվիրյալ ու լուսավոր առաքելությունը եւ փառքի նոր էջեր հավելն Հայոց Եկեղեցու պատմության մեջ:



Տերուհական աղոթքից եւ ճեմարանի օրհներգից հետո 2013-2014 թթ. ուսումնական տարվա ամփոփեց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեորգյան ճեմարանի տեսուչ Գեորգ Եպս Սարգսյանը՝ փաստելով այն կարեւոր ձեռքբերումները, որոնք արձանագրվել են Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններում: Արքեպիսկոպոսը մեծ նվաճում համարեց հատկապես այն, որ ուսումնառությանը զուգընթաց՝ հանրաճանաչ տարբեր մասնագետների կողմից ճեմարանում անցկացվել են բազում արտաժամյա դասախոսություններ, կազմակերպվել ճանաչողական եւ մշակութային բնույթի այցելություններ: Նա անդրադարձավ ներճեմարանական նորակազմ տարբեր խմբակների գործունեությանը, եկեղեցական սոցիալական ծրագրերին ճեմարանականների մասնակցությանը, սաների ջանքերով «Սերմնացան» մատենաշարի շրջանակներում հրատարակվող աշխատություններին, ներկայացրեց նաեւ Հայաստանի եւ արտերկրի բարձրագույն կրթական եւ հոգեւոր տարբեր հաստատությունների եւ ճեմարանի միջեւ ձեւավորված արդյունավետ համագործակցությունը:

Այնուհետեւ հայրենասիրական բնույթի բանաստեղծություններով ու երգերով հան-

խոսքն ուղղելով ճեմարանի այս տարվա 32 եւ քահանայից լսարանն ավարտած 10 սաներին՝ Նորին Արքեպիսկոպոսը պատգամեց. «Յուրաքանչյուրը պիտի լավագույնս իմանա Եկեղեցին շենացնելու, պայծառացնելու իր ուղույն կերպը, իրականացնելու Տիրոջ փրկչագործական առաքելությունը մեր ժողովրդի կյանքում, գործնելու նրա հոգեւոր կյանքը եւ փրկության առաջնորդելու: Իսկ փրկության ճանապարհը դժվարին ճանապարհն է՝ սատանայական փորձություններով լեցուն: Այդ ամենը կիրականացնենք, եթե մենք ունենք տեսիլք եւ այդ տեսիլքն իրագործելու կամք: Այլապես տվյալ անձը, ով դուրս է գալիս ճեմարանի հաստատությունից, չպիտի կարողանա բարի արդյունքներ արձանագրել ո՛չ իր անձի եւ ո՛չ էլ մեր Սր Եկեղեցու համար: Ճեմարանական նստարանին յուրաքանչյուր ուսանող պետք է կերտի իր երազը, իր տեսիլքը ապագա գործունեության՝ որպես հոգեւոր սպասավոր: Այդպես միայն մեր Եկեղեցին կհզորանա, մեր Եկեղեցու առաքելությունն արդյունավոր կլինի, կպայծառանա, կշողա Հայաստանյայց Առաքելական Սր Եկեղեցու փառքն ազգային մեր կյանքում»:

Հանդիսությունը փակվեց Պահպանիչ աղոթքով եւ Հայրապետական մաղերգով:

Կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների միջթեմական համաժողով Ծաղկաձորում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սր Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը (ԶԴԿ), «Վորլդ Վիժն» միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համագործակցաբար, հունիսի 7-10-ը Ծաղկաձորում անցկացրեց կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների միջթեմական համաժողով, որին մասնակցում էր մեր Եկեղեցու հայաստանյան բոլոր թեմերից շուրջ 130 մանկավարժ:

Համաժողովի բացման հանդիսավոր արարողությանը օրհնության խոսքով հանդես եկավ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Զարամյանը: Նա կարեւորեց կիրակնօրյա կրթօջախների գործունեության անհրաժեշտությունը եկեղեցական կյանքում: Ողջույնի խոսքով հանդես եկան ԶԴԿ-ի տնօրեն Վարդան վրդ. Նավասարդյանը, «Վորլդ Վիժն»-ի տնօրեն Ժիրայր Էդիսյանը, Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ, պատգամավոր տիկին Կարինե Պողոսյանը: ՀՀ կրթության եւ գիտության նախարարի ողջույնը համաժողովի մասնակիցներին փոխանցեց ԿԳՆ հանրակրթության վարչության պետ տիկին Նարինե Հովհաննիսյանը:

Համաժողովի առաջին օրը «Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով բանախոսությամբ հանդես եկավ պարոն Ռոման Հարությունյանը, իսկ նախընթաց տարվա ԶԴԿ-ի գործունեությունը կիրակնօրյաների ոլորտում ներկայաց-



րեց ԶԴԿ-ի ոլորտի պատասխանատու Անի Հունանյանը:

Ծրագրով նախատեսված՝ Աստվածաշնչի ամենօրյա սերտողությունն իրականացրին համաժողովի մասնակից քահանա հայրերը, հրավիրյալ բանախոսները ներկայացրին սուրբօրային թեմաները, Հայ Եկեղեցու վարդապետության ու ավանդույթի նվիրված բանախոսություններ, ինչպես նաեւ տեղի ունեցան մեթոդական ուսուցումներ՝ խմբային աշխատանքների միջոցով: Համաժողովը նշանավորվեց կիրակնօրյա ուսումնական ծրագրի եւ դասագրքերի շրջանակում պատրաստված մեթոդական ձեռնարկի ներկայացմամբ եւ քննարկմամբ:

Մանկավարժները Կեչառիսի վանական համալիրում մասնակցեցին ժամասացությունների, ինչպես նաեւ՝ Թարգմանչաց տոնի առիթով իրենց իսկ ուժերով կազմակերպված միջոցառմանը:

Դասընթացի հանդիսավոր փակմանը համաժողովի բոլոր մասնակիցներն իրենց երախտիքը հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ սույն օգտակար ծրագրի իրականացման համար:

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
քրիստոնեական դաստիարակության կենտրոն**

«Տիեզերքում Էներգիայի ամենամեծ աղբյուրը» գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Ս. Էջմիածին

Հունիսի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այցելեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում ընթացող «Տիեզերքում Էներգիայի ամենամեծ աղբյուրը» միջազգային գիտաժողովի մասնակիցները: Մայր Աթոռում աստղագետներին ողջունեց եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը փոխանցեց Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Աթոթիկ թեմի առաջնորդ Հովակիմ Եպս Մանուկյանը:

Հանդիպմանը Հովակիմ Եպիսկոպոսն անդրադարձավ նմանօրինակ ժողովների կազմակերպման կարեւորությանը՝ վստահություն հայտնելով, որ դրանք լավագույնս խթանելու են միջազգային գիտական հանրության կողմից հայ ժողովրդի համար մեծ նվաճում համարվող գիտական կենտրոնի՝ Բյուրականի աստղադիտարանի ավելի լայն ճանաչմանը:



Չրույցի ընթացքում հյուրերին ներկայացվեց Հայ Եկեղեցու պատմական ուղին, մասնավորապես՝ կրթական եւ սոցիալական դաշտում իրականացվող արդի գործունեությունը, ինչպես նաեւ՝ միջեկեղեցական հարաբերությունների ոլորտում արձանագրված սերտ գործակցությունն ու ձեռքբերումները:

Քլայվ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ թիվ 3-6, 8-12

Բրիտանացի հանրահայտ գրող Քլայվ Լուիսի վերոհիշյալ գործը քրիստոնեական թեմաներով երգիծական մի ստեղծագործություն է, որ ներկայացնում է Խառնակիչ կոչվող դեմոնի նամակները նրա զարմիկ Օշինդրին: «Խառնակիչի նամակները» ստեղծագործությունը՝ որպես առանձին գիրք, առաջին անգամ հրատարակվել է 1942 թվականին:

13

Իմ սիրելի Օշինդրիկ,
Ինձ թվում է՝ մի շատ պարզ պատմություն գրելու համար դու չափից դուրս

ԽԱՌՆԱԿԶԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Նվիրվում է Զ. Թովկենցիին (անգլիացի գրող, բանաստեղծ, բանասեր)

Հատ էջեր ես մրոտում: Դրա Եական մասն այն է միայն, որ դու թույլ ես տվել, որ խնամարկյալ մատներիդ արանքից դուրս պրծնի: Իրավիճակը խիստ ծանր է, եւ ես իսկապես որեւէ պատճառ չեմ տեսնում, թե ինչու ես պիտի փորձեմ քեզ պաշտպանել քո անկարողության հետեւանքներից: Զո նկարագրած ապաշխարությունն ու նորոգությունն այն բանի, որը կշեռքի հակառակ կողմը «շնորհ» է կոչում, առաջին կարգի պարտություն է: Դա հավասարազոր է երկրորդ դարձի եւ հավանաբար շատ ավելի խոր, քան առաջինը:

Դու պիտի որ իմանայիր, որ այն հեղձուցիչ ամպը, որ խանգարեց քեզ հարձակում գործելու խնամարկյալիդ վրա, երբ վերջինս հին ջրաղացից վերադառնում էր, քաջ հայտնի երեւոյթ է: Դա Թշնամու ամենաբարձրագույն գեղըն է եւ սովորաբար հայտնվում է, երբ նա անմիջականորեն ներկայանում է խնամարկյալին որոշակի ձեւերով, որոնք դեռեւս ամբողջությամբ դասակարգված չեն: Որոշ մարդիկ մշտապես շրջապատված են դրանով, ուստի անմեղծենալի են մեզ համար:

Իսկ իմմա՝ ըն թույլ տված սխալների մասին: Ըստ քո իսկ ներկայացման՝ նախ

թույլ տվեցիր, որ խնամարկյալի մի գիրք կարդա, որից նա իսկապես հաճույք ստացավ, որովհետեւ նա այն իրոք հավանեց եւ ոչ թե կարդում էր, որ հետո դրա մասին խելոք մեկնաբանություններ կատարեր իր նոր ընկերների առաջ: Երկրորդ՝ դու թույլ տվեցիր, որ նա քայլելով գնա հին ջրաղացը եւ թեյի այնտեղ, իսկ գյուղական վայրերում քայլելուց նա իրոք հաճույք է ստանում: Այլ խոսքով՝ դու նրան երկու իսկապես դրական հաճույք թույլ տվեցիր: Մի՞թե այդքան անտեղյակ էիր, որ չտեսար սրա վտանգը:

Շարունակությունը՝ էջ 5



Նիկոլ Աղբալյան

Խորհրդային գաղափարախոսությունն սկզբից եւեթ սահմանափակեց ազգ, ազգային հասկացությունների շրջանակները: Առանձին ազգերի փոխարեն կոչ էր արվում ստեղծելու նոր՝ խորհրդային ազգ, նոր՝ խորհրդային մշակույթ՝ եւ արվեստ: Ազգային տեղական հասկացությունը համարվում էր նացիոնալիզմ, համարվում էր մեղք եւ դատապարտվում:

Սկզբից եւեթ հայրենիքը՝ որպէս ազգի, ժողովրդի, լեզվի, մշակույթի, սովորությունների միասնություն, ոչնչացվեց, եւ առաջադրվեց նոր հասկացություն՝ խորհրդային ժողովուրդ, սոցիալիստական հայրենիք, ինտերնացիոնալ հայրենասիրություն:

Այս գաղափարները տարփողում էին կուսակցական եւ գրական պարբերականները, իսկ կուսակցական օրաթերթերը՝ «Խորհրդային Հայաստան», «Մարտակոչ», առավելապէս 1920-ականներին լայն տեղ էին հատկացնում գրականությանն եւ մշակույթի հարցերին:

«Երեքի» ղեկարացիան սկզբից եւեթ, այսինքն՝ 1922 թ. հունիսի 14-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում աշխարհին ի լուր պարզեց իր դիրքորոշումը. «Ներկա հայ բանաստեղծությունը մի թուքախտավոր է, որ անխուսափելիորեն դատապարտված է մահվան: <...>: Հայրենիք, «Մեր անբիծ», «Անապատ ու մենություն», «Մթնշաղներ նրբակերտ», «Սոռաջում ու

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ XX ԴԱՐ

(մասնակի կրճատումներով)

երազներ»,- ահա մեր գրական թղթախտի մանրէները, որոնց առաջացրած պտուղներն են՝ նացիոնալիզմ, ռոմանտիզմ, պեսիմիզմ եւ սիմվոլիզմ: Մենք հանդես ենք գալիս որպէս ախտահանողներ: <...>: Զաղքենի նացիոնալիզմին մենք հակադրում ենք պրոլետարական ինտերնացիոնալիզմը»:

Կապուտաչա հայրենիքի երազանքը մնաց հեռվում: Հիմա անհրաժեշտ էր ժողովրդին հաշտեցնել նոր պայմանների հետ եւ, առանց շեղվելու, ձայնակցել խորհրդային միասնական գրականության խմբերգին:

Անցյալի հիշողությունը որակվեց որպէս անցյալի իդեալականացում եւ դատապարտվեց: Արգելվեց անգամ մտաբերել մոտակա տարիների ողբերգությունը՝ 1915-ի ցեղասպանությամբ հանդերձ: Մերժվեցին հայրենասիրական ոգին վառ պահող ազգային ավանդույթները: Ազգային գրողները համարվեցին դասակարգային թշնամիներ: Այս պահանջները խախտողները հրապարակայնորեն քննադատվում էին, պետականորեն մեղադրվում եւ որպէս նացիոնալիստներ կա՛մ գնդակահարվում էին, կա՛մ աքսորվում:

Ահա այս պայմաններում, պատմաքաղաքական դեպքերի զարգացմամբ պայմանավորված, գեղարվեստական զարգացումը դրսևորեց յուրահատկություններ, ինչը պահանջում է այս շրջանը բաժանել երթաշրջանների.

I. 1920-1940 թվականներ (կազմավորման եւ զարգացման շրջան),

II. 1941-1945 թվականներ (պատերազմի տարիներ),

III. 1946-1953 թվականներ (անկոնֆլիկտայնության եւ կյանքի գունազարդման շրջան),

IV. 1954-1970 թվականներ (վերելքի տարիներ),

V. 1971-1984 թվականներ (լճացման շրջան),

VI. 1985-1990 թվականներ (վերակառուցման եւ հրապարակայնության շրջան),

VII. 1991-ից առ այսօր (անկախության շրջան):

1918-1940 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Հայաստանի առաջին Հանրապետությունը ժամանակ չունեցավ զբաղվելու գրական հարցերով: Պարբերականները կոչ էին ուղղում տարագիր հայությանը՝ «Տուն դարձեք» («Հայաստանի կոոպերացիա», երկշաբաթաթերթ, 1919, թիվ 17, 31 հոկտեմբեր):

Այդուամենայնիվ մամուլում լույս էին տեսնում բանաստեղծություններ ու պատմվածքներ: Որբանոցային սերունդն արդեն հասել էր գրականություն մուտք գործելու տարիքին, եւ նրանց մեջ՝ Գուրգեն Մահարին, Նաիրի Չարյանը, Վեսպերը, Համբարձում Մազմանյանը... Նրանց բանաստեղծությունների մեջ կա՛մ սուգ ու արցունք էր, կա՛մ նոր երկրի երազանք: Այդ պարբերականում տպագրվում էին Ե. Չարենցի, Ա. Տիգրանյանի, Ս. Չորյանի, Դ. Դեմիրճյանի Գ. Զալալյանի, Ոստանիկի, Վ. Թոթովենցի, Ա. Վշտունու եւ այլոց երկեր:

Գրական անկազմակերպ վիճակը կազմակերպելու նպատակով 1919 թ. սեպտեմբերի 28-ին Նիկոլ Աղբալյանի գլխավորությամբ Երեւանում ստեղծվում է Հայաստանի գրական ընկերությունը («Հայաստանի կոոպերացիա», 1919, թիվ 16, 15 հոկտեմբեր):

«Հայաստանի կոոպերացիա»-ի գրական բաժինը վարում էր Դավիթ Անանու-

նը: «Սոի հարատևությունը» հողվածում նա պարզ ու որոշակի գրում է. «Ջերմոցային գրականությունից պետք է անցնել <...> իրականության շնչով թաթախված գրականության» («Հայաստանի կոոպերացիա», 1920, թիվ 1, էջ 27): Որպես գրական ուղենիշ՝ տալիս է Սունդուկյանի եւ Շիրվանզադեի անունները: «Դարձ դեպի ճշմարտություն»,- հրահանգում է նա եւ հռետորական հարց տալիս. «Սակայն ո՞րն է մեր կյանքի ճշմարտությունը»:

Նոր կյանքը վարքագրողների ժամանակն էր, մինչդեռ գրողներից շատերի ներշնչանքը դեռ անցյալ դարձած օրերի մեջ էր:

Նորի որոնման հայացքով Դավիթ Անանունը գրախոսում է Չարենցի «Բուրիս, բուրիս, բուրիս» (1920) գիրքը, ինչի մեջ նրա երեք ռադիոպոեմներն էին: Չարենցը «Երկաթակուռ, նո՛ր, հզո՛ր աշխարհ էր երազում»: Մինչդեռ գրախոսի համար դա սոսկ «կույր տարբեր» էր: Այստեղից նա անցնում է ընդհանրացման եւ շատ դիպուկ ձեւակերպում. «Ռուսական հեղափոխությունը զոհ գնաց կույր տարբերին: Նա բարձրացրեց ժողովրդական հատակի դիրքը, պղտորեց սոցիալիզմի անապական լիճը եւ կենդանական բնագոյը հայտարարեց աշխարհաշեն գործոն» («Հայաստանի կոոպերացիա», 1920, թիվ 15, 15 օգոստոս):

Այս ամենի մեջ դեպի հայրենիք տանող գրական նոր ճանապարհներն էին, հեշտ չէր այդ ճանապարհը գտնել, բուրիս անորոշության ու շվարումի մեջ էին: Չարենցն էր, որ հենց այդ երեք ռադիոպոեմներով գտավ ճանապարհը, որ այդուհետեւ դառնալու էր երկրի ու երկրի բանաստեղծի միասնական ճանապարհ: Այդ ճանապարհն անցնելու էր մահվան տեսիլների միջով եւ նրան տանելու էր դեպի խաչելություն՝ դեպի 1937-ի Գողգոթան:

Խորհրդային կարգեր հաստատելու սկզբից եւեթ պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից ազգային ոգին դատապարտվեց: Երեկվա հերոսները, ովքեր թշնամու դեմ ճակատ էին տվել Սարդարապատում, հռչակվեցին ժողովրդի թշնամիներ: Ազգային բանակի հարյուրավոր սպաներ կալանավորվեցին եւ աքսորվեցին Ռյազան:


Շարունակությունը՝ էջ 6

ՌԻԶԱՐԴ ՆԱԳՈԾՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հայ-ամերիկյան գրականության մեջ յուրօրինակ տեղ է գրավում արձակագիր Ռիչարդ Հագոփյանը: Անկասկած, նա չունի այն մեծ հռչակը գրական շրջանակներում, ինչպես Վիլյամ Մարոյանը, Լեւոն-Չավեն Մյուրմելյանը, Փիթեր Սուրյանը, Էմանուել Վարանդյանը եւ Փիթեր Բալաքյանը, սակայն նրան հաջողվել է ստեղծել հայկական թեմաներ մարմնավորող մի քանի ուշագրավ երկեր. «Աղավին խաղաղություն է բերում» (1944), «Հեռու է գարունը» (1952), «Գինի ողջերի համար» (1956): Ռիչարդ Հագոփյանի հերոսը «փոքր մարդն է», որը ոչ մի կերպ չի կարողանում գտնել իր տեղն ու դերը ամերիկյան հասարակության մեջ: Նա ի գորու չէ հոգ տանելու իր ընտանիքի մասին: Բայց եւ այնպես, երբ կարդում ես ամերիկահայ գրողի երկերը, դժվարանում ես ասել, թե արդյոք հայազգի հերոսին համակած ընկճախտի պատճառը հայ ազգի ողբերգական անցյալն է, թե՞ ամերիկյան արժեհամակարգին հարմարվելու անընդունակությունը: Անկախ ամենից՝ Հագոփյանը համակրում է իր հերոսներին՝ ընդունելով նրանց այնպիսին, ինչպիսին նրանք կան: Ընթերցողն ամերիկահայ գրողի մեջ տեսնում է մի եռանդուն ու ոգեշունչ անձնավորություն, որն ափսոսանք է զգում մոռացվածի համար:

Ռիչարդ Հագոփյանի հերոսները թերահավատությամբ են լցված «նոր աշխարհում» իրենց խաղացած դերի հանդեպ: Հայազգի հե-

րոսների այդ երեքում հոգեվիճակը դրսևորվում է ամերիկահայ արձակագրի գրվածքների մեղամադճուռ քնարականության մեջ: Գեղեցկության առկայծումները մի հիմն գյուղական երգի մեջ, երեխաների թռչնաման կեցվածքը, «հալարտ» շոգեմալի շարժումը կամ էլ ամեն բան զոհելու ձգտումը հանուն պատվի պայքարում - այս ամենն արտացոլում է սահմանագծերից դուրս գալու մարդկային տենչանքը չարաքանքով ու դառը բախտով լի այս աշխարհում: Անհարկելով, որ իր հայազգի հերոսները սահմանափակ հնարավորությունների տեր են, Հագոփյանը հաճախ ցույց է տալիս, թե ինչպես են նրանք հայտնվում խելահեղորեն գավեշտակյա կամ էլ տխուր երկընտրանքների առջև: Ամերիկահայ արձակագրի կողմից «Հեռու է գարունը» վեպում պատկերված հայրդիմ փողով մարդի է խաղում՝ խաղաքարտի վրա դնելով իր մեկ շաքարվա աշխատավարձը, կամ էլ փորձանք է բերում իր գլխին՝ պաշտպանելով անբարո կանանց: Ընչու այնպես, ինչպես «Մասունցի Դավիթ» էպոսում միախառնված են հումորն ու պաթոսը, որոնք խորհրդանշում են կյանքի դաժանությունները «Հին աշխարհում», այնպես էլ



Հագոփյանի արձակում այս նույն հակասությունները ցույց են տալիս անհանգիստ անցումը դեպի «նոր»:

Ռիչարդ Հագոփյանը «Հեռու է գարունը» վեպում ընթերցողին ներկայացնում է իր գլխավոր մտահոգությունները: Գրքի հերոսները մի տեսակ դուրս են մնացել կյանքի բնականոն հունից: Նրանք «մնան են մոլորված ոչխարների, որոնք անվերջ դեպերում են ու մեռնում՝ չունենալով անգամ մեկ սենթ» (տե՛ս էջ 201): Վեպի գլխավոր գործող անձը՝ Մեթրակ Դինջյանը, տխուր հայ է, որը մտահոգված է կյանքում ունեցած իր անվերջա-

ցը եւ կշռի կոշիկի գործարաններով՝ որեւէ աշխատանք մուրալու համար: Իմ դուստրը հրաշալի աղջիկ է: Մի՞թե նա այս կյանքին է արժանի» (տե՛ս Hagopian R., նույն տեղում, էջ 106): Ինչ վերաբերում է Մեթրակի կնոջը՝ Մարիամին, ապա նա մի հնազանդ անձնավորություն է, որն իր վրա է վերցրել ընտանիքի սոցիալական ծանր բեռը՝ աշխատելով որպես սպասք լվացող՝ բոլորակալ Եկեղեցու հավաքույթների ժամանակ: Այստեղ տեղին է մի զուգահեռ անցկացնել Հագոփյանի գրքի հերոսուհու եւ ժամանակակից հայ կնոջ կերպարների միջեւ. մեր դժվարին ժամանակներում, երբ

հազարավոր հայ ընտանիքներ հայտնվել են սոցիալական ծանրագույն վիճակում, հայ կինը հերոսաբար դիմակայում է առկա խնդիրներին: Նա կարծես իր վրա է վերցրել հայ տղամարդու դերն ու պարտականությունները՝ հանում սեփական օջախի հարատեւման: Փաստորեն՝ «Հեռու է գարունը» վեպի հերոսուհու եւ ժամանակակից հայ կանանց ճակատագրերը նույնական են, եւ սա այն դեպքում, երբ սփյուռքահայ արձակագիրը գրել է անցած դարի կեսերին ապրած հայուհու մասին: Մարիամ Դինջյանի զգուշավոր անկախությունն ընդունում է այն վտանգավոր իրավիճակները, որոնց պատճառով Մեթրակը մեկուսացել էր իրեն շրջապատող աշխարհից: Այդ աշխարհը չէր ցանկանում Մեթրակին ընդունել այնպիսին, ինչպիսին որ նա կար: Դինջյանի կյանքի մեղուրաման հասնում է իր վերջնակետին, երբ նա ամեն անգամ տեսնում է իր հաշմանդամ որդուն, ով այդպիսին էր դարձել հոր անփութության հետեւանքով:

Վեպի սյուժեի զարգացման ընթացքում գլխավոր հերոսը հնարավորություն է ստանում ազատվելու տարիների ընթացքում կուտակված ընտանեկան վշտից: Մեթրակին այս հարցում օգնում է նարդու խաղը: Միայն խաղի պահին էր, որ Մեթրակն իրեն արքա էր զգում. «Ես կարող եմ գաղթ բերանով քթել եւ հաղթել: Այս խաղն իմ հոգին է ու սիրտը» (տե՛ս Hagopian R., նույն տեղում, էջ 82):

Շարունակությունը՝ էջ 8



«... Արդարեւ, երջանկությունն ունէր հպարտ լինելու, որ եղել էր սիրած ու բարձրորէն գնահատուած ուսուցիչ եւ Տիրոջ բարեխնամ օրհնութեամբ այսօր էլ շարունակում էր անմնացորդ սիրով Ձեր գիտելիքները, փորձն ու հմտութիւնները ի սպաս դնել նոր սերնդի կրթութեան ազգօգուտ գործին»

Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Լրացավ Երեւանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ճանաչված, սիրված, մեծ հեղինակություն վայելող դասախոս, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակը:

Պրոֆեսոր Հովհաննիսյանին աշակերտած յուրաքանչյուր ոք կվկայի, որ նա խստապահանջ դասախոս է, իր հանձնարարականների մեջ՝ բծախնդիր, հետեւողական: Բարձր է նաեւ պատասխանատվությունն իր գործի նկատմամբ, այդպիսին է

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿՈՉՈՒՄՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՈՒՍՈՒՑԻՉ, ՊԱՏՄԱԲԱՆ...

(ԵՊՀ դասնության ֆակուլտետի Հայոց դասնության ամբիոնի վարիչ, որոֆեսոր, ԳՅՆ դասախոս)

Ե՛ւ ճեմարանում, Ե՛ւ համալսարանում:

Նա պահանջկոտ է, բայց հանդուրժող, ո՛չ քիսախնդիր, հետեւողական, բայց նեղորոգ, չսովորողին սովորեցնող:

Թեեւ Պետրոս Հովհաննիսյանն արտաքինից խիստ է, բայց նրա բոլոր ուսանողները գիտեն, որ նա գյուրեցուն հատուկ նուրբ եւ սուր հումոր ունի, ինչն էլ օգնում է նրան դասախոս-ուսանող հարաբերությունները ճիշտ եւ բարեկամական հողի վրա կառուցելուն:

Մեծարգո պրոֆեսորը սիրված է ամենքի կողմից՝ թե՛ ուսանողների եւ թե՛ գիտնականների, նա մեծ հեղինակություն վայելող մանկավարժներից ու պատմաբաններից մեկն է:

Ծնվել է 1944 թ. հունիսի 22-ին Լենինական (Գյումրի) քաղաքում՝ երգչկացի Հովհաննես Հովհաննիսյանի եւ տրապիզոնցի Վարդանուշ Լուսպարյանի ընտանիքում, ուր զավակներից հինգերորդն է:

1951-1961 թթ. սովորել է ավարտել է Լենինականի Վ. Մայակովսկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցը: 1962-1970 թթ. ուսանել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Համալսարանում ուսումնառության տարիներին՝ 1964-1967 թթ., զորակոչվել է ԽՍՀՄ բանակ:

1970-1973 թթ. կրթությունը շարունակել է Երեւանի պետական համալսարանի ասպիրանտուրայում՝ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերոբ Պողոսյանի ղեկավարությամբ: Վերջինիս գիտական ղեկավարության ներքո էլ 1976 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Հին եւ միջնադարյան Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը ակադեմիկոս Հակոբ

Մանանդյանի աշխատություններում» թեմայով:

1975 թվականից սկսյալ զբաղվել է մանկավարժական եւ ստեղծագործական բուն աշխատանքով: Եղել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի ավագ դասախոս, դոցենտ (1984), պրոֆեսոր (2011), Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար (2013): 1984-ից առ այսօր գիտական, գիտամեթոդական, ուսումնական մի շարք խորհուրդների անդամ է: Մասնակցել է հայագիտական միջազգային եւ հանրապետական բազմաթիվ գիտաժողովների:

Պրոֆեսոր Հովհաննիսյանի մանկավարժական հարուստ փորձից, բազմակողմանի գիտելիքներից օգտվել են ոչ միայն պետական համալսարանի պատմության եւ այլ ֆակուլտետների ուսանողները, այլեւ Սփյուռքի ուսումնական եւ գիտական մի շարք հաստատություններ:

Այսպես. նա 1992-1993 թթ. դասավանդել է Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկում, 1995-1999 թթ.՝ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, 1999-ից առ այսօր՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: Վերջին երկու հաստատություններում դասավանդելու տարիներին նրա դասախոսական գիտելիքներից են սնվել Հայ Առաքելական Ս. Եկեղեցու այսօրվա բազմաթիվ եկեղեցականներ, ինչի գնահատանքը եղավ 2004 թվականին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո շքանշանի արժանացումը, իսկ 2009 թվականին Հանրապետության նախագահը մեծանուն գիտնականին շնորհեց «Հայաստանի վաստակավոր մանկավարժ» բարձր կոչումը:

Պետրոս Հովհաննիսյանի գործունեության մեջ բացառիկ տեղ է գրավում նրա գիտա-մանկավարժական երկարամյա՝ շուրջ 40 տարվա աշխատանքը: Այս տարիների ընթացքում նա իր տեղն ամրագրեց պատմագիտության, աղբյուրագիտության եւ մատենագրության բնագավառներում: Նշված յուրաքանչյուր ոլորտում կատարել է այնպիսի ուսումնասիրություններ, որոնք միայն պատիվ են բերում դրանց հեղինակին (նա հեղինակ է տպագիր 400-ից ավելի աշխատության): Պետրոս Հովհաննիսյանը, բացի նշված բնագավառներում կատարվող ուսումնասիրություններից, ունի խմբագրական բացառիկ շնորհ: Նրա խմբագրությամբ են լույս տեսել եւ շարունակում են լույս տեսնել թե՛ համալսարանի եւ թե՛ Մայր Աթոռի բազմաթիվ արժեքավոր մատենագրություններ եւ ժողովածուներ (շուրջ 80 աշխատանք): Այստեղ մասնավոր ուզում ենք շեշտել հոբելյարի սերը հատկապես Գեւորգյան ճեմարանի նկատմամբ: Հենց նրա խմբագրությամբ են հեղինակությամբ են լույս տեսնում բազմաթիվ ժողովածուներ, մենագրություններ ու հոդվածներ՝ նվիրված Գեւորգյան ճեմարանի պատմության տարբեր շրջաններին, որոնցով լույս են սփռվում ճեմարանի պատմության մի շարք հարցերի վրա:

Այսու, շնորհավորում ենք մեծարգո պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանին՝ ծննդյան 70-ամյակի առիթով՝ ցանկանալով քաջառողջ եւ բարեալքեր կենաց բազում օրեր ու նորանոր հաջողություններ՝ իր բեղմնավոր թե՛ գիտական եւ թե՛ դասախոսական գործունեության պատվաբեր բնագավառներում:

Արարատ քին. ՊՈՂՈՍՅԱՆ
«Վաչե եւ Թամար Մանուկյան»
մատենադարանի տնօրեն

Քլայվ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ էջ 3

Ցավերն ու հաճույքները հատկությամբ այնպիսին են, որ անկասկած իրական են, ուստի իրականության փորձաքար են ծառայում մարդու համար, ով դրանք ապրում է: Հետեւաբար, եթե դու քո այդ մարդուն դատապարտության տանելի ռոմանտիկ ճանապարհով՝ նրան վերածելով մի տեսակ Չայլո Հարոլդի կամ Վերթերի (սրանք գրական կերպարներ են եւ գլխավոր հերոսները, համապատասխանաբար, Բայրոնի «Չայլո Հարոլդի ուխտագնացությունը» եւ Գյոթեի «Վերթերի վշտերը» գործերի - թրգմ.), ով երեւակայական դժբախտությունների պատճառով ինքնախոճահարության է տրվում, դու կջանայիր ամեն գնով պաշտպանել նրան ամեն տեսակ իրական ցավից, որովհետեւ հինգ թույլ տեսած իսկական ատամնացավ անշուշտ պիտի բացահայտեր ռոմանտիկ վշտերի անհեթեթությունը եւ դիմակագործեր քո ամբողջ խորամանկությունը: Բայց դու փորձում էիր խնամարկյալիդ դատապարտության տանել աշխարհի միջոցով, այսինքն՝ ունայն զբաղմունքները, աղմուկը, հեգնանքն ու անգնահատելի ծանծրայթը թաքուն մատուցելով որպես հաճույքներ: Ինչպե՞ս չտեսար, որ իրական հաճույքը վերջին բանն էր, որ դու պետք է թույլ տայիր նրան զգալ: Մի՞թե չկանխատեսեցիր, որ հակադրության մեջ դա պարզապես կսպանի այն ամբողջ կեղծիքը, որ դու այդքան ջանասիրաբար սովորեցնում էիր նրան արժեւորել: Որ գրքի ու զբոսանքի պատճառած այդ հաճույքի տեսակն ամենավտանգավորն էր: Որ դա պիտի պոկեր նրա զգայարաններից այն կեղեւը, որը դու ձեւավորում էիր դրանց վրա, եւ նրան զգալ տար, որ ինքն առողջանում ու տուն է վերադառնում: Որպես Թշնամուց նրան հեռացնելու առաջին քայլ՝ դու ցանկանում էիր նրան հեռացնել սեփական անձից եւ

ԽԱՂՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Նվիրվում է Զ. Թովկիենցին (ամգլիացի գրող, բանաստեղծ, բանասեր)

արդեն որոշ հաջողությունների էիր հասել սրանում: Բայց այժմ այդ ամենն ի չիք դարձավ:

Իհարկե, ես գիտեմ, որ Թշնամին նույնպես ցանկանում է մարդկանց հեռացնել սեփական անձերից, բայց ա՛յլ ճանապարհով: Միշտ հիշիր, որ Նա իսկապես հավանում է այդ փոքրիկ մակաբույծներին եւ նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությանն անհեթեթ արժեք վերագրում: Երբ Նա խոսում է այն մասին, որ նրանք պետք է կորցնեն իրենց անձը, միայն ի նկատի ունի, որ պիտի թողնեն իրենց պնդաճակատության բարձր պահանջները. եթե նրանք սա անում են, Նա նրանց իսկապես վերադարձնում է նրանց ամբողջ անհատականությունը եւ պարծենում (վախենամ՝ անկեղծորեն) նրանով, որ երբ նրանք ամբողջապես Իրենց լինեն, անհատականությամբ ավելի շատ կփայլեն, քան երբեք: Ուստիեւ, թեեւ Նրան հաճելի է տեսնել, որ նրանք Իր կամքին նվիրաբերում են անգամ իրենց անմեղ ցանկությունները, Նա տանել չի կարող նրանց հեռացումն իրենց սեփական բնությունից որեւէ այլ պատճառով: Իսկ մենք պետք է միշտ քաջալերենք, որ նրանք դա անեն: Մարդկանց ամենախոր նախասիրություններն ու ազդակներն այն հում նյութն են՝ սկզբնական վիճակը, որով Թշնամին օժտել է նրանց: Հետեւաբար, դրանցից մարդուն հեռացնելիս ամեն անգամ մի միավոր ես շահում. նույնիսկ անկարելի բաներում միշտ ցանկալի է մարդու սեփական իրական նախասիրություններն ու խորշանքները փոխարինել այս աշխարհի չափանիշներով, նրանով, ինչ ինքնուրույն է կամ նորաձեւությամբ: Ես ինքս այս ուղղությունը շատ առաջ կտանեի: Ես կանոն կդրանքի իմ խնամար-



կյալից վերացնել որեւէ ուժեղ անձնական նախասիրություն, որը մեղք չէ, նույնիսկ եթե դա մի աննշան բան է, օրինակ՝ կրիկետի, դրոշմանիշներ հավաքելու կամ կապո խմելու հանդեպ սերը: Այսպիսի բաները, վատահեցնում են քեզ, առաքինություն չեն, սակայն նրանցում կա մի տեսակ անմեղություն՝ խոնարհությամբ ու ինքնամոռացությամբ, եւ դրան ես չեմ վստահում: Այն մարդը, ով ճշմարտապես եւ առանց անձնական շահի վայելում է որեւէ բան այս աշխարհում, միայն այդ բանի համար եւ առանց բնավ հոգ տանելու, թե ուրիշներն ինչ են ասում դրա մասին, արդեն իսկ սրանով նախագինված է մեր հարձակումների ամենանուրբ ձեւերի դեմ: Դու պետք է միշտ փորձես այնպես անել,

որ խնամարկյալ թողնի այն մարդկանց, կերակուրները կամ գրքերը, որոնք նա իսկապես սիրում է, եւ ընտրի «լավագույն» մարդկանց, «ամենաճիշտ» սնունդը եւ «կարելի» գրքերը: Ես գիտեմ մարդու, ով հասարակական փառասիրության հզոր փորձություններից պաշտպանվել է քաղիթի եւ սոխի հանդեպ շատ ավելի հզոր նախասիրության շնորհիվ:

Հիմա մնում է հասկանալ, թե ինչպես ազատվենք այս աղետալի վիճակից: Կարելի է, որ խնամարկյալիդ հեռու պահես որեւէ բան գործելուց: Զանի դեռ նա իր այս նոր ապաշխարությունը գործի չի վերածել, ոչ մի նշանակություն չունի, թե որքան է դրա մասին մտածում: Թող այդ փոքրիկ արարածը թավալ տա այդ վիճակում: Թող նա գիրք գրի դրա մասին, եթե ունի այդպիսի հակում. դա հաճախ գերազանց միջոց է մարդկային հոգու մեջ Թշնամու ցանած սերմերն ամլացնելու: Թող անի ամեն ինչ, բացի իրական գործից: Նրա երեւակայության ու նախասիրությունների մեջ առկա բարեպաշտության ոչ մի չափ մեզ չի վնասի, եթե մենք կարողանանք այն հեռու պահել նրա կամքից: Ինչպես ասել է մարդկանցից մեկը, գործածվող սովորություններն ամրանում են կրկնությամբ, իսկ զգործածվողները՝ թուլանում: Որքան հաճախ նա ցանկություն չունենա գործելու, այնքան պակաս կկարողանա գործել եւ, ի վերջո, նաեւ պակաս կզգա դրա կարիքը:

Շո սիրաւատ քեռի՝
ԽԱՂՆԱԿԻՉ

Շարունակելի

Անգլերենից թարգմանությունը՝
Ս. Ս.-ի



Սկիզբը՝ թիվ 12

Այս վերջին անցքի համառոտ, բայց հավաստի նկարագիրը գտնվել է Բրիտանական թանգարանում պահպանված XIV դարի հայերեն մի գրչագրում, որը Թվորանցու տաղի արժանահավատությունը հաստատող մի վավերագիր է։ Այդ հետաքրքիր ձեռագրի գրիչը Լիպարիտի եղբայր Վասիլն է. «Ի թվին ՊԺԸ (1369)-ն ի մայիսիսի ամսուս Ի(20)-ն երեկ Տարսոյ նա-յիպն Շուհորե որդին ի վերայ Արսու։ Ի շա-բաթ օր կռուեցան Յուսիս դիհն ու իրք մի վզեն չկարցին այնել։ Ու կերակի ի վա-ղուենե եկին յԱնցմնցկին կանդարայն հեծմնով ու հետեկով, դրին կռիւ ու խանկրեցին զքրիստոնէքն ու սպանին Ծ (100) մարդ։ Ու սպանին զպարոն Լիպարիտ՝ պարոն Թորոս ավաք մարաջախտուն որդին, ու այրեցին զքաղաքն ու զդարպասն։ Ու կեցաւ Գ (3) աւր ու դարձաւ ի յոր տեղն ի Տարսուս։ Կու ասեն, թէ Կոստընդին թագաւոր՝ պարոն Յեթմու որդին, եբեր զհիծելն ու տուր տուեց զպարոն Լիպարիտն ու զքաղաքն տաճկին» («Պատմաբանասիրական հանդես», Եր., 1964, թիվ 2, էջ 113)։

Այսինքն՝ Կոստանդին V թագավորն ատել է Լիպարիտին եւ հանձին նրա տեսել գահի իր մրցորդին։ Նա նույնիսկ վախ է ունեցել սպարապետից եւ վտանգված տեսել իր թագն ու արքայական դիրքը։ Սրա լավագույն արտահայտությունը «Պատմութիւն քաջ Լիպարտին» գրույցն է. «Եւ թագաւորն Յայոց երկեաւ ի քաջ Լիպարիտեն, զի մի գուցէ եւ զինքն սպանանէ եւ ինքն թագաւորէ» (Ն. Ակիկյանի հրապարակումը «Հանդես ամսօրյա»-ում, էջ 131)։ Իհարկէ, Կոստանդին V տագնապներն ի-

ՎԻՊԱԿԱՆ ՏԱՂԼԻՊԱՐԻՏ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

զուր չեն եղել, քանի որ ռազմավարական մեծ տաղանդով օժտված զորավարը, հավանաբար, շատ սիրված է եղել ժողովրդի կողմից եւ համարվել երկրի միակ պաշտպանն ու հույսը։ Քաջ Լիպարիտը հիշեցնում է մեր Էպոսի սիրված հերոսներին՝ Մեծ Միերին, Դավթին, Փոքր Միերին, որոնք իրենց դյուցազնական հզոր ուժով պահում էին Սասունն ու սասունցիներին։

Սակայն գահի հանդեպ ունեցած սպարապետի հավակնությունները պայմանավորված են եղել ոչ միայն շատ սիրված լինելով, այլեւ՝ ծագմամբ։ Ու թեեւ վերը հիշատակված գրույցում ասված էր, թէ Լիպարիտը գահ բարձրանալու ոչ մի ցանկություն չի ունեցել՝ «Այլ քաջ Լիպարիտն հոգով եւ մարմնով ոչ ուներ այնպէս վատ խորհուրդ» (Նույն տեղում), բայց չի բացառվում եւ հակառակը, քանի որ որոշ հիմքեր դրա համար կան Բրիտանական թանգարանի՝ տողատակում նշված թիվ 5458 ձեռագրում։ Այս տեսակետի շուրջ ավելի հանգամանակից ուսումնասիրություն է կատարել եւ համոզիչ կերպով ապացուցել նշանավոր բանասեր Պ. Խաչատրյանը՝ «Տաղ քաջի Լիպարտինի» քննության մեջ («Պատմաբանասիրական հանդես», նշված համարը, էջ 114-115)։ Նա գտնում է, որ այս ձեռագրում՝ Սմբատ Գունդստաբլի Տարեգրության անանուն շարունակողի բաժնում, հայկական ՉԾԵ (1308) եւ ՉԿ (1311) թվականների դիմաց լուսանցքում գրված լրացումը՝ «Ի տյն ա-մի (այսինքն՝ 1308 թ. - Պ. Խ.) զնաց Օշին թագաւոր ի Թավրեժու դանն վասն երկրիս կարե[ա]յց, որ եւ ար[ա]ր խնամութիւն ընդ Գորգէն թագաւոր Վրաց ու այրին պոմն թուխթ առջի դանին՝ զԴաւիթ որդի Վրաց թագաւորին ի հետ տամուժել Ալիծին՝ փոքր քօրն Օշին թագաւորին, ու եբեր զԴաւիթն ի հետն ու ի թվին] ՉԿ (1311)-ն արար հարսնիք ի 2 (6)-ն յունուարն ի Տարսուս ու երես սիգողով զԿապանն իր երկրովն ու հաստատեց զպարոն Դաւիթն գունթ Կապնուն երկրին թագաւորէն, տեր Էվանէ արիիեպիսկոպոսն Սիւնեաց եւ պարոն Շահէնշահ աւագ մարաջախտն Վրաց, եւ այրին պոման, որ հայոց սահմանով կենաց, եւ ոչ մի բան ֆռանգութեան չլինի յիւր ամէն կենդանութեանն», հիմք է տալիս հաստատելու վերը նշվածը։

Այս ենթադրության առիթ է տալիս նաեւ Կիլիկիայի պատմության քաջատեղյակ բանաստեղծ Ղ. Ալիշանի այն տեսակետը, որ Լիպարիտ «անունն անգամ ան-

ծանոթ եւ անսովոր է բոլոր Կյուլիկեցվոց պատմության մեջ, եւ սովորագոյն է վրացահայոց ու մանավանդ Ունպէլյան տոհմին մեջ» (Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց Յայոց, հտ. Բ., էջ 509)։ Լիպարիտի անվան մուտքը հայերի մեջ պայմանավորված է վրացական ազդեցությամբ, թեպետ այսօր վրացիների մոտ այն համարյա չի հանդիպում (Հ. Աճառյանը Նույնպէս հաստատում է այդ անվան վրացական ծագում ունենալը. տե՛ս «Յայոց անձնանունների բառարան», հտ. Բ., Եր., 1944, էջ 430)։ Ուրեմն կարելի է հետեւեցնել, որ Գորգէն թագավորի որդին, փեսայանալով Լեւոն II-ի դստերը, Օշինից արժանացել է կալվածքի ու կոչման, կարգվել «գունթ Կապնուն»։ Կապանցի է եղել նաեւ Լիպարիտի եւ Վասիլի հայր Թորոսը։ Թերեւս «վերջինս ծնված լինել վրաց արքայագ-նից ու Ալիծից եւ, իբրեւ մոր կողմից Յեթու-մյան դինաստիայից սերած, բարձրացվել սպարապետության աստիճանի, քանի որ արքայական ընտանիքին արեւակցութեամբ կապված անձնավորություններն էին մեծ մասամբ հաստատվում կարեւոր պաշտոններում» («Պատմաբանասիրական հանդես», նշվ. հոդվածը, էջ 116)։ Ահա այս ճանապարհով Թորոսի որդին կարող էր ստանալ վրացական Լիպարիտ անունը։ Սակայն այս վարկածը հաստատող ուրեմն ձեռագիր ապացույց դեռեւս չի հայտնաբերվել, այսինքն՝ որ Դավիթն ու Ալիծը Թորոսի ծնողներն են եղել։ Իսկ եթե դրա իսկությունը ճշմարտվի, ապա «իր լուսանցագրություններով Վասիլը շահարկել է հայկական գահի նկատմամբ Լիպարիտի իրավունքները» (Նույն տեղում)։

Այստեղ հետաքրքիր է մի հանգամանք եւս։ Ըստ պատմագիտական գրականության մեջ եղած մի կարծիքի՝ «թագավորը (այսինքն՝ Կոստանդին V-ը) չի կարողանում պահել կամուրջը, որ անցնում է թշնամու ձեռքը» (Լեո, Յայոց պատմություն, հտ. Գ, էջ 214)։ Բայց Թվորանցու տաղի մեջ իրողությունն այլ կերպ է մեկնաբանված, որն ավելի հավաստի է թվում եւ համապատասխանում պատմական իրականությանը.

Նայ թագաւորըն չարացաւ.

զհեծելն առին 'ւ ի յետ դարձան։

Այսինքն՝ պարզվում է, որ թուլամորթ Կոստանդին V-ը, որը ժան Դարդելի վկայությամբ՝ կիպրացի էր եւ հայոց թագավոր էր ընտրվել չափազանց հարուստ լինելու պատճառով՝ «առ փարթամութեանն»

(«Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն», Ս.-Պ., 1891, էջ 110-111) համաձայնության է գալիս Եգիպտոսի սուլթանի հետ՝ խոստանալով հանձնել նրան իր թագն ու երկիրը, միայն թե ապահոված լինի կյանքն ու հարստությունը։ Եվ բոլորովին էլ անհավանական չէ, որ 1369 թ. մայիսյան մի օր նա է դավադրաբար հրավիրել Մանչակ ամիրային եւ, ըստ Վասիլի, նենգորեն «տուր» տվել, հանձնել «զպարոն Լիպարիտն ու զքաղաքն տաճկին» («Պատմաբանասիրական հանդես», էջ 113)։

Իսկ արդյո՞ք Թվորանցին եղել է Լիպարիտի ժամանակակիցը, թե՞ այս մեծ զորավարի քաջագործությունների մասին հետագայում է լսել ականատեսներից։ «Տաղ քաջի Լիպարտինը» դեպքերն այնքան հարազատորեն է նկարագրում, լի է պատմական հավաստիության շնչով, որ բանաստեղծը, Ներսէս Շնորհալու պես, իր նկարագրածի մասին կարող էր ասել՝ «զիրս եղելոց, մեր ժամանակս դիպելոց»։ Թվորանցու ողբը ոչ թե «հորինված է ժողովրդի մոտ արդեն ստեղծված գրույցների օգտագործում-մշակումով» (Պիվագյան), այլ բանաստեղծն ինքն է ստեղծել այն իբրեւ ժամանակակից՝ ոգեշնչված պատմական եղելությունից։ «Տաղ քաջի Լիպարտինը», ինչպես Դավթակ Զերթոդի «Ողբք ի Մահն Ֆեւանշիրի մեծի իշխանին» (7-րդ դար) քերթվածը, պատմական դեպքերի, իրադարձությունների անմիջական, անգամ համաժամանակյա արտացոլումն է.

Յորտեղ նըստին հաց 'ւ ի սեղան

ժողովք բազում եւ շատ իշխան,

Յիշեն ըզնա սուրբ քահանայքն,

Կէր ողորմի ասն նըմա։

Եվ այս տողերը ցույց են տալիս, որ շատ թարմ է եղել Լիպարիտի հերոսական մահվան հիշատակը, եւ անունը՝ այնքան սիրված ու ճանաչված, որ ժողովուրդը դեռեւս սգի մեջ է եղել, քահանաները, իբրեւ նոր մահացածի, «Տէր ողորմի» են ասել նրան։ Ուրեմն տաղը պետք է գրված լինի այդ դեպքից (1369 թ.) քիչ անց, եւ տաղասաց Թվորանցին՝ հեղինակը, ապրած 14-րդ դարում։

«Տաղ քաջի Լիպարտին» վիպական տաղի առաջին մասում Թվորանցին անձնագրիությամբ անմոռանալի իր հերոսի գովքն է անում, իսկ շարունակության մեջ նկարագրում կատարված դեպքերը։

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

Սկիզբը՝ էջ 4

Հալածվեցին նախկին կուսակցությունների անդամները։ 1923-ին Երեւանում տեղի ունեցավ Հայաստանի հեղափոխական դաշնակցության լուծարային համագումարը, եւ շուրջ 4.000 անդամ դուրս եկավ կուսակցությունից։ 1921 թվականի Փետրվարյան ապստամբությունը կոչված էր Հայաստանում փրկելու ոտնահարվող ազգային արժեքները։ Կարմիր բանակի ուժերով ապստամբությունը ճնշելուց հետո հայրենասեր գործիչներին այլ բան չէր մնում, քան հեռանալ հայրենիքից։ Եվ նրանց մեջ՝ Լեւոն Շանթի, Նիկոլ Աղբալյանի պես անուններ։

Հայրենիքի որդիները գնում էին, անհայրենիք, ապագային պրոլետարները՝ գալիս։ Երեկվա գաղթականներն ու որբերը, ովքեր արցունքն աչքերին էին հեռացել պատմական Հայաստանի գյուղերից ու քաղաքներից, ովքեր գաղթի ճանապարհների թողել էին հարազատների դիակները, հիմա ստիպված էին այդ ամենն ուրա-


նալ։ Դա արտահայտվեց շատերի ստեղծագործության մեջ (Նաիրի Չարյան, Վահրամ Ալազան, Ազատ Վշտունի, Գեորգ Աբով եւ ուրիշներ)։

Անցյալի մոռացումով, անգամ ուրացումով փորձ էր արվում գաղափարական նոր պահանջների դիրքերից պատկերել ժողովրդի սոցիալիստական նոր առօրյան, ապա եւ՝ սոցիալիստական շինարարությունն ու կառուցումը։ Այդ առիթներն էին Շիրակի ջրանցքի կառուցումը, կոլեկտիվացումը, արդյունաբերական առաջին ձեռնարկումները, անհատի պաշտամունքը։

Զմոռանանք՝ երկիրը քայքայված էր, ամենուր՝ գաղթականություն, սով, համաճարակներ, անապատաններ։ Միայն ամերիկյան նպաստամատույց կոմիտեն Հայաստանում ուներ 13 մանկատուն՝ 2961 որբով։ Սովից Ղափանի հայությունը հեռանում էր Բաքու, անդրկասպյան երկրներ։ Սով էր ամբողջ Հայաստանում։ Ավելանում են անասունների ժանտախտը,

մարդկանց վրա գայլերի ու բորենիների հարձակման դեպքերը։ 1921-ին Հայաստանում քաղաքացիական պատերազմներ էին։ Չանգեզուրում, ուր Նժդեհն էր, խորհրդային իշխանությունը հաստատվում է նույն 1921-ի հուլիսի 16-ին։

Կարսում գերի ընկած 8000 հայերից տուն է վերադառնում 700-ը, մնացածն սպանվել էին («Մարտակոչ», այսուհետեւ՝ ՄՀ, 1921, թիվ 191, 21 հոկտեմբեր)։ Երկիրը կամաց-կամաց նաեւ առողջացման քայլեր է անում։ 1922 թ. հունվարի 11-ին Երեւանում վառվում է առաջին էլեկտրական լամպը։ Հատկացումներ են արվում գեղարվեստի եւ լուսավորության զարգացման համար։ Նոր կարգերը նաեւ հաշտեցման իրենց պայմաններն են թելադրում։ Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը բարեկամության կոչ է ուղղում թուրքերին ու Արեւելքի մյուս ժողովուրդներին։ Կատարվում է ուղղագրական «բարեխոսություն», իբր թե ուսուցու-



Մեփան Չարյան

մը հեշտացնելու նպատակով եւ գործադրվում է 1922 թ. ապրիլի 1-ից։ Դեռ ավելին՝ փորձ են անում մեարդայան այբուբենից անցնելու լատինական գրի։

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՆԱ ՀԱՎԱՏՈՒՄ ԷՐ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՏՈՒՆԴԱՐՁԻՆ

(Մեծ հայի՝ Ստեփան Պողոսյանի հիշատակին)

Սասնո աշխարհի ծնունդ, հայ մեծանուն պատմաբան, հանրային, կուսակցական ու պետական գործիչ Ստեփան Կարապետի Պողոսյանը մեր ժողովրդի այն զավակներից մեկն էր, ում երկրային կյանքի ու երկրային ժամանակի ավարտից հետո սկսվում են նրա անմահության երթն ու ժամանակը, երբ ապրելու եւ հարատեւելու են նրա որդեգրած ու դավանած գաղափարներն ու մոտեցումները, խոհերն ու ապրումները, գործերն ու կերտած իրողությունները:



ջերմ ու անկեղծ զգացմունքներ: Ոչ միայն պատմաբան գիտնականի, հրապարակախոսի գրչով, այլև որպես պետական պաշտոնյա, հասարակական գործիչ՝ Ստ. Պողոսյանն աննախադեպ եռանդով, թարմությամբ ու ակտիվությամբ լծվեց մեր ժողովրդի պատմական հիշողության վերականգնման հիմնահարցի նորոգմանն ու կարելորմանը:

Այս ամենը հատկապես եւ մասնավորապես ցայտուկորեն արտահայտվեց թվականներին, երբ նա գտնվում էր ՀԽՍՀ հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահի՝ պարտավորեցնող պաշտոնում: Ազգային արդարացի մտածելակերպի տեր մտավորականի հայտնությամբ հայկական հեռուստատեսությունն արագորեն վերափոխեց իր դեմքն ու ներքին բովանդակությունը: Այդ տարիներին էր, որ ձեւավորվեցին մի շարք նոր խմբագրություններ, բացվեցին նոր հաղորդաշարեր:

Եվ ամենակարեւորը՝ փոխվեցին հայկական հեռուստատեսության ոգին եւ ներքին բովանդակությունը: Նրա մեծածավալ աշխատանքի եւ անդադրում ջանքերի շնորհիվ

Նրա կենսագրությունը, կյանքն ու գործը, պայքարն ու տառապանքը այնքան նման էին իր ժողովրդի պատմական բախտին ու ճակատագրին:

Մինչեւ ուղն ու ծուծը, մինչեւ իր կյանքի ավարտը Ստեփան Պողոսյանը հոգու բոլոր նյարդերով կրեց իրեն ծնած ժողովրդի պատմության, նրա ճակատագրի խոյակներն ու խորշակները, վիշտն ու ուրախությունները, տագնապներն ու մտահոգությունները:

Նա իր սերնդի ու իր ժամանակի լավագույն մտավորականներից էր, իր ժողովրդի պատմական հիշողության տարեգիրը՝ հեղինակած արժեքավոր գրքերով, հոդվածներով: Նա իր ուսումնասիրություններով տարիներ եւ տասնամյակներ շարունակ կրթեց ու դաստիարակեց մատաղ սերունդների միտքն ու հոգին, բորբոքեց հայրենասիրական

հայկական հեռուստատեսությունն ավելի ու առավել հայկական՝ հայաշունչ ու հայակենտրոն դարձավ: Հենց այդ տարիներին էր, որ հայկական եթերը դարձավ սերունդներ կրթող ու դաստիարակող ամենակարեւոր ու ամենամեծ լսարան ունեցող հաստատությունը Հայաստանում: Ամեն օր հայ գրականության ու հայոց պատմության ընտիր էջերով հղկվում եւ հարստացվում էին հայ դպրոցականների ու այրերի միտքն ու հոգին, ձեւավորվում բարձր ու նրբին գեղարվեստական ճաշակ:

Հայրենապաշտ, բարձր, ազնիվ գաղափարայնությամբ օժտված սերունդ էր աճում, կրթվում, դաստիարակվում, որն իր հոգում յուրացրել ու սերտել էր հայոց բազմադարյան պատմության բոլոր կարեւոր դասերն ու օրինաչափությունները եւ արդեն պատրաստ էր սկսելու եւ

գլխավորելու հայոց ազգային-ազատագրական շարժման ու պայքարի նոր էտապը:

Հայրենապաշտ մտավորական Ստեփան Պողոսյանի գլխավորած հեռուստալսարանի բովով էր անցել ու թրծվել վերոնշյալ սերունդը, որի շարքերում Թաթուլ Կրպեյանի, Լեոնիդ Ազգալոյանի, Վարդան Բախշյանի, Մովսես Գորգիսյանի նման հավատացյալ ու հայրենակներ երիտասարդներ էին, որոնք մինչեւ ուղն ու ծուծը հանուն հայրենիքի մարտելու, մարտնչելու եւ նահատակվելու գաղափարներն ու ոգին էին կրում, ներամփոփում իրենց մեջ:

Այո՛, 1988 թվականի փետրվարյան ազգային մեծ զարթոնքը նախապատաստեցին Ստեփան Պողոսյանի նման հայ գաղափարական ռաիվորաները, որոնք ներսից այրվում, տառապում ու տապակվում էին իրենց ծնած ու սնած ժողովրդի պատմության անջնշելի ու անմոռանալի դասերով, մեծ հարցերով ու հարցականներով:

Եվ երբ ամեն ինչ արդեն անցյալ էր ու դարձել էր պատմություն, երբ արդեն ազատագրված էր հողը հայրենի, երբ ազատ շնչում էր Արցախ աշխարհը, Ստեփան Պողոսյան հայորդին, երկրի ճշմարիտ զավակն ու հայրենասերը կարող էր խոստովանել, որ ինքը սրբությամբ ու սրբորեն մինչեւ վերջ կատարել է որդիական իր հավատարմությունն ու պարտքը՝ հայրենի ժողովրդի, հայոց պատմության, ներկա ու գալիք սերունդների առջեւ:

Այո՛, նա գալիս էր իր ժողովրդի պատմության ճշմարիտ ակունքներից, գալիս էր իր հոր ու պապերի ծննդավայրի՝ հերոսական, անպարտ ու անվախ Սասունի կենսագրության էջերից, գալիս էր Սասունցի Դավթի հետքերով ու ճանապարհով: Նա գալիս էր մեզ՝ իր ժամանակակիցներին ու հետագա սերունդներին եւս մեկ անգամ հավատացնելու եւ հավաստիացնելու, որ կրողուսյալ հայրենիքն ընդմիշտ չի կարող մնալ խլված ու հափշտակված, որ հայրենագրկված ժողովուրդը չի կարող ընդմիշտ մոռանալ տունդարձի ճանապարհը: Այդ կարեւոր նպատակին նա նվիրեց ու ծառայեցրեց իր գրական, գիտական ու հրապարակախոսական ձիրքը:

Ստեփան Պողոսյան անհատականության տաղանդի փայլատակման գորավոր ու անջնշելի կնիքն են կրում նրա թողած մնայուն ու կոթողային գործերը, որոնք վաղուց դարձել են հայ ընթերցողի գրասեղանի ամենից կարդացվող գրքերը:

Ստեփան Պողոսյան հայ գիտնականի, նորարարի եւ ըմբոստ նկարագրի տեր քաղաքացու անհատականությամբ էր պայմանավորված հայ պատմագիտական մտքի կարեւոր շրջադարձը՝ դեպի ազգային արժեքների բացահայտումը, ազգային պատմության փակ ու կասկածելի էջերի ճշմարտացի վերծանումը: Նա գիտական ողջ ներուժը, հոգու եւ մտքի ողջ էներգիան տարիներ շարունակ նպատակադրեց հայոց ցեղասպանության մուր ու սահմակեցուցիչ էջերի բացահայտմանը, խորությամբ հետազոտեց ցեղասպանության մտահղացման ու գործադրության ակունքները, դատապարտեց մեծ տերությունների նենգադավ վերաբերմունքը հայ դատի եւ հայ ժողովրդի հանդեպ: «Գոյատեւման պայքարի քառուղիներում», «Ինձ բահ տվեք», «Հայկական հարցի եւ հայոց ցեղասպանության պատմություն»... Այս եւ մեծարժեք այլ գործեր նոր փայլով եւ խորությամբ հարստացրին հայ գիտական ու հրապարակախոսական միտքը: Նա գիտական շրջանառության մեջ ներդրեց նոր վավերագրեր, առաջ քաշեց նոր տեսակետներ ու վարկածներ: Ցեղասպանության թեման նրա երակներում ու արյան մեջ ներծծվել էր իր մանկությունից սկսած: Ի վերջո, նա ցեղասպանությունից մազապուրծ գերդաստանի զավակ էր եւ կատարվածը նա ապրում, զգում էր իր մաշկի վրա, հոգում եւ սրտում:

Ստեփան Պողոսյան հայ անհատի կյանքի եւ գործունեության բոլոր էջերն ազնիվ, մաքուր շղարշով են պատված: Նրա կյանքում չկա եւ չէր կարող լինել մի դրվագ, որն ամոթալի կհամարվեր: Նա վերին աստիճանի խորիմտ ու լիակատար արժանապատվությամբ ապրեց եւ փակեց իր կյանքի բոլոր էջերը:

Երախտապարտ հայ սերունդները դեռ պիտի գնահատեն եւ իմաստավորեն նրա կյանքի եւ գործունեության դասերն ու պատգամները, թողած վիթխարի ժառանգությունը: Դեռ նոր-նոր են բացվում նրա ստեղծագործական մտքի գաղտնիքներն ու թնիքները:

Դեռ գալու է Ստեփան Պողոսյան մեծ հայի, աննման ու հերոսական Սասունի մեծ զավակի ժամանակը...

Արմեն ԿԱՐՎԴԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՎԻՊԱԿԱՆ ՏԱՂ ԼԻՊԱՐԻՏ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 6

Ահա Սոս պաշտպան քաջ գորավարի ներքողը.

*Յորժամ հեծնուր գիր ձին վազան,
ի ձեռն առնոյր զըրում ճօճան,
Սասաներ ազգըն թուրքանց,
դրդայր ամեն Տաճիկաստան:*

Քաջ ու գոված հսկա սպարապետը նման է իր հեռավոր նախորդին՝ Մուշեղին: Հիշենք Հովասափ Սեբաստացու (16-րդ դար) Մուշեղի մասին տաղը, ուր նույնպես անչափ գեղեցիկ երգվում են Մամիկոնյան իշխանի դուրսագնական ուժը, նրա բազում հաղթանակները եւ դավադիր մահը, ինչպես եւ մեր հերոսինը (Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Վ. Գեւորգյանի, Եր., 1964, էջ 91).

*Միջովն ի վեր քան զամենայն,
Պարթեւ իզար զարագլխեան.
Է՛ր քաջասիրտ յառիժ նման,
Որ ի յահեն աշխարհի դողան:*

Թշնամի թուրքերին անընդհատ հարձակվում են Սսի վրա, եւ ամեն անգամ նրանց կոտորում ու հետ է շարտում խի-



զախ սպարապետը: Ահա այս անգամ էլ Մանչակի բանակը նախապատրաստվում է հարձակման.

*Վաթսուն հազար մարդ միաբան
զըրեհն հազան 'ւ ի ձին հեծան,
Ձեռուին առին զըրում ճօճան,*

*թուր եւ ասպար ու կանգնեցան:
Հարին ըզփող պատերազմին,
զպուկն ու զնաֆիրն ըզգաւ հարկան:
Հակառակորդի թվական հերակշռության կրկնակի նշումով (վաթսուն հազար)՝ բանաստեղծը, կարծես, ցանկանում*

է ավելի ընդգծել թշնամու սպառնալիքի ահավորությունը, իսկ զինահանդերձման ու ռազմափողերի հնչման նկարագրով էլ ավելի դրամատիկ դարձնել մարտական դիպվածի տեսարանը: Մեծաքանակ թուրքերը բոլոր կողմերից պաշարել են քաղաքը, սակայն չեն համարձակվում անմիջապես ներխուժել, որովհետեւ սսեցիների հետ է քաջ սպարապետը, որին հույսով ու հավատով ապավինել է տագնապած ժողովուրդը: Իսկ թուլամորթ արքան, քենը սրտում պահած (քանի որ ինքն էր առիթ տվել Մանչակի հարձակմանը, ինչպես վերը նշվեց), մարտի է հրավիրում նրան՝ ուղարկելով ստույգ մահվան.

Յայնժամ ասէ սուրբ թագաւորն.

*«Քա՛ջ Լիպարիտ, մե՛ծ զօրական
Հեծելըս քեզ համար եկան
մինչ յայս տեղիս, ուր կանգնեցան»:*

Քաջ Լիպարիտը թեեւ կանխազգում է, որ կռիվն այս անգամ օրհասական է լինելու, թամբում է իր ձին, զինավառվում.

*Քաղցրիկ տուր պատասխանի,
թէ՛ «Ես՝ քաղքիս չարին փոխան,
Բայց չէ պատեհ զըրուց առնել,
թէպէտ հասաւ ինձ օր մահուան»:*

Շարունակելի

Վարդան ԵՐԻԱՋԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՆՈՐ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ԺԱ դարի Նշանավոր հայրերից **Հովհաննես Սարկավագ վարդապետի «Աղոթագրքի» աշխարհաբար թարգմանությունը** (թարգմանիչ՝ Ա. Մադոյան):




«Աղոթամատույցի» աշխարհաբար հրատարակությունը, որ իրականացվել է մեկենասությամբ Մայր Աթոռի բարերար տիար Գաբրիել Զեմպերյանի, Նախատեսված է ընթերցող լայն հասարակության համար:

Հաջորդ գիրքն **Ամենայն Հայոց 129-րդ Կաթողիկոս Գեորգ 2 Զորեքցյանի (1945-1954 թթ.) «Քարոզներ եւ ելույթներ» ժողովածուն է**, որն ընդգրկում է երջանակահիշատակ Հայրապետի անտիպ քարոզները, հրապարակային ելույթներն ու 1917 թվականին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրատարակված «Քարոզգիրքը»:

Ժողովածուն հրատարակվել է մեկենասությամբ Մայր Աթոռի բարերար տիար Սարգիս Գաբրիելյանի:

Երրորդ գիրքը, որ ներկայացնում ենք ձեր ուշադրությանը, Մայր Աթոռի պաշտոնական մամուլի բաժնի տնօրեն, Գեորգյան հոգեւոր ճեմարանի դասախոս **Շահեվոր Անանյանի «Հին Մերձավոր Արեւելքից Զրիստոսյա Հայաստան. անձնավորված իմաստության գաղափարի առաջացումն ու զարգացումն ըստ Առակաց Ա-Թ-ի» աշխատությունն է**:

Ուսումնասիրության մեջ, ըստ Աստվածաշնչի կանոնականացված բնագրի, ներկայացված են Առակաց գրքի Ա-Թ գլուխների մեկնությունն ու բացատրությունը՝ նպատակ ունենալով վերհանել ու մատ-



նանշել իմաստության գաղափարի փիլիսոփայական-մտահայեցական հիմքը՝ իբրեւ քրիստոնեական փիլիսոփայության հնարավոր ու դիտելի օրինակ: Այն ոչ միայն արծարծում է աստվածաշնչյան դրվագներն ու գաղափարները, այլեւ փորձում դիտարկել դրանք Հին աշխարհի եւ վաղքրիստոնեական ժամանակաշրջան թեւակոխած փիլիսոփայական-աստվածաբանական դպրոցների գաղափարների լույսի ներքո:

Գիրքը հրատարակվել է «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ:

Հաջորդը **Երվանդ Տեր-Մինասյանի «Հայոց Եկեղեցին» եւ «Զրիստոսի հրաշքների եւ բժշկությունների հայ միջնադարյան մեկնությունները» աշխատություններն են**:

Նշանավոր հայագետ, աստվածաբանության լիցենցիատ, փիլիսոփայական եւ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Երվանդ Տեր-Մինասյանի «Հայոց Եկեղեցին» ուսումնասիրողական ձեռնարկը ներկայացնում է առաքելական շրջանից մինչեւ 1970-ականներն ընկած ժամանակաշրջանի Հայ Եկեղեցու պատմությունը:

Գիրքը, որը հրատարակության է պատրաստել Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեորգ Եպս Սարոյանը՝ իբրեւ լրացուցիչ ուսումնական ձեռնարկ, հասցեագրվում է ուսանողությանը եւ Հայ Եկեղեցու պատմությամբ հետաքրքրվող ընթերցող լայն հանրությանը:

Աշխատությունը, որը լույս է տեսել «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ, նվիրվում է Գեորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակին:

Մյուս՝ «**Զրիստոսի հրաշքների եւ բժշկությունների հայ միջնադարյան մեկնությունները**» աշխատությունը կազմված է

ըստ ձեռագիր եւ տպագիր աղբյուրների: Ծաղկաբաղ այս բնագրում բժշկությունների կամ հրաշքների մեկնությունները տրված են ըստ Ավետարանների հերթագայության, ապա՝ մեկնիչների ժամանակագրական կարգով: Տերունական հրաշքների մեկնության՝ ներկայացվող բնագիրը հնարավորություն է տալիս մեկնողական գրական ավանդույթի մեջ ավելի տեսանելի դարձնել ավանդականն ու փոխանցվողը, յուրաքանչյուր հեղինակի անհատական ինքնուրույն շերտերի դրսևորումները:

Աշխատությունը, որը կազմել է Նաիրա Թամամյանը՝ խմբագրությամբ Գեորգ Տեր-Վարդանյանի, Նախատեսված է հոգեւոր կրթական հաստատությունների, Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների եւ ընթերցողների լայն շրջանակների համար:

Գիրքը հրատարակվել է Մայր Աթոռի բարերար Գաբրիել Զեմպերյանի մեկենասությամբ:


«Հարսանեկան ծիսաշարի կանոնները եւ արարողությունները Հայոց Եկեղեցում» աշխատության հեղինակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Խորեն վրդ. Հովհաննիսյանն է:



Գրքում նկարագրված է Պսակի արարողության պատմական զարգացումը՝ եկեղեցական արարողությունների եւ ժողովրդական ծիսաշարի ողջ ընթացքով: Մովսիսական օրենքի, «Կանոնագիրը Հայոց»-ի, հայ սովորույթական իրավունքի կանոնների ընկալմամբ եւ աղբյուրագիտական զանազան վկայակոչումներով արծարծվում են ամուսնության եւ Պսակի խորհրդին վերաբերող հոգեւոր-բարոյական բնույթի հարցեր:

Առանձին բաժնով ներկայացվում են 19-րդ դարակեսից մինչեւ 20-րդ դարի 60-ական թվականները հարսանեկան ծեսի ազգագրական տարբեր շրջանների նկարագրությունների ու գրառումների այն հատվածները, որոնք վերաբերում են եկեղեցական օրինությամբ եւ մասնակցությամբ կատարված հարսանեկան արարողություններին:

Գիրքը հրատարակվել է «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ: Վերահրատարակվել է Նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան **Հովհաննես Եպս Ծախիսյանյանցի (1799-1849 թթ.) «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ»** արժե-



քավոր աշխատությունը: Այս երկհատոր աշխատության առաջին հրատարակությունը լույս է տեսել 1842 թվականին: Այն պարունակում է փաստական նյութեր Ս. Էջմիածնի Մայր տաճարի, Վաղարշապատի մյուս սրբավայրերի ու հուշարձանների, ինչպէս նաեւ Այրարատի հինգ գավառների վերաբերյալ:

Արմեն Տեր-Ստեփանյանի աշխատասիրությամբ վերահրատարակված արժեքավոր այս երկը համեմատվել է սրբագրվել է ըստ Մատենադարանում պահվող Ծախիսյանցի ինքնագրերի: Լրացվել են նաեւ վիճակագրական տվյալները, կատարվել են անհրաժեշտ ծանոթագրություններ:

Աշխատության վերջում, իբրեւ հավելված, հրատարակվել է Նաեւ երկու բնագիր. առաջինը Շուշիում տպագրված մի ժամագրքի վերջում Հովհաննես Եպիսկոպոսի հրատարակած կաթողիկոսացանկերն են, իսկ երկրորդը՝ 1840 թ. երկրաշարժի մասին գրած՝ մինչ այս անտիպ մի նյութ:

Գիրքը եւս հրատարակվել է մեկենասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի:

Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՋԱՅԱԿԱՐԳԻ

ՌԻՉԱՐԴ ՆԱԳՈԾՅԱՄՆԻ...

Սկիզբը՝ էջ 4

Հագովիյանի գլխավոր հերոսի թշվառ կյանքի պոետականությունը եւ նրա առնականությունը դրված են խաղաքարտի վրա: Երբ նա կորցնում է ամեն բան, կորցնում է նաեւ արժանապատվությունը եւ որպէս հայր հարգվելու իրավունքը: Մեթրակը ոչ միայն չի կարողանում վճարել իր հաշմանդամ դարձած որդու բուժման ծախսերը, այլեւ հանցանք է գործում՝ խանութից գողանալով մի գլխարկ՝ որպէս Սուրբ Զատիկի նվեր իր կրտսեր դստեր համար: Սակայն Մեթրակն իր այս արարքով իրականացնում է իր դստեր գեղեցիկ երեսալու բաղձանքը:

Թեւեւ Ռիչարդ Հագովիյանի «Հեռու է գալուց» վեպը լի է մռայլ երանգներով, սակայն վերջին հաշվով այն ողբերգական գիրք չէ: Ընկերությունը եւ զգացական հաճույքները փոքր-ինչ թեթեւացնում են ամերիկահայ գրողի պատկերած հայ տարագրի հոգսերը: Աղճատված իրազեկվածության կամ էլ խելահեղ ոգեշնչության պահերն ընթերցողին հուշում են, որ Հագովիյանի պատկերած աշխարհը ոչ այնքան ողբերգական

է, որքան տրագիկոմիկական: Վեպի գարնահարաշ ավարտը լրացնում է այս տրամադրությունը. մի օտարական մահանում է առեղծվածային մահով եւ մեծ գումար է թողնում Մեթրակին՝ այսպիսով ապացուցելով, որ կյանքում շատ հրաշքներ կարող են կատարվել:

Ռիչարդ Հագովիյանի երկրորդ ուշագրավ երկը «Գինի ողջերի համար» վեպն է: Սա ավելի մեծածավալ ու հավակնոտ ստեղծագործություն է, քան նախորդը: Հավանաբար սխալված չենք լինի, եթե ասենք, որ «Գինի ողջերի համար» վեպը սփյուռքահայ գրողի ամենահետաքրքիր գրվածքն է: Վերջինիս մեջ կան դրվագներ, որոնցից հորդում է կատակերգական ոգին, որը կրկին հակասության մեջ է մտնում գրքում առկա թախծոտ տրամադրությունների հետ: Վեպի գործողությունները տեղի են ունենում Մասաչուսեթս նահանգի Ռիվիերա քաղաքում, որտեղ, ի դեպ, 1914 թ. ծնվել էր Ռիչարդ Հագովիյանը: Ռիվիերան մի քաղաք է, որն առանձնանում է մերձափնյա քաղաքին բնորոշ տուրիստական տեսար-

ժան վայրերով եւ բազմազգ միջավայրով: Այս բազմազգ միջավայրն այդ քաղաքին՝ «Հին աշխարհից» մնացած մի կոյակին հատուկ գրավչություն է հաղորդում: Սա մի աշխարհ է, որտեղ երեխաները կտրված են ծնողներից: Վերջիններս իրենց համապագայի հասցը վաստակելու համար չնչին վարձատրությամբ ֆիզիկական ծանր աշխատանքներ են կատարում: Ռիվիերան նաեւ մի քաղաք է, որտեղ մեկ ակնթարթի պատահականությունը կարող է ջախջախել մարդկային սրտի ցանկությունները: Շատ հաճախ այդ պատահականությունը լինում է անսպասելի մահը: Այդուհանդերձ՝ Հագովիյանի այս երկը դժվար է որակել որպէս գուտ ողբերգություն: Ամերիկահայ գրողի հայ հերոսների ծաղրապատկերները գրքի հավասարակշռության մտարը թեքում են դեպի կոմեդիան: Հագովիյանի վեպի սյուժեի կենտրոնում է գտնվում հայագրի մեկ այլ անհավատարիմ հայր, որի անունն է Արա Արոյան: Արան մեծ գլխացավանքներ է ունենում, երբ նրա աներձագը՝ Աթանասը, ներխուժում է նրա ընտանեկան կյանք: Անգամ աներձագի անունը՝ Աթանաս, գուցարկվում է «սատանա» բառի

հետ: Ասվածից պարզ է դառնում, որ վեպի այս հերոսն իրենից ներկայացնում է Հարիքի մարմնավորում:

**Շարունակելի
Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու**

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոսյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 16.7.2014 թ.

Տպագրական՝ 2100

Գինը՝ 50 դրամ